



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 թվականի N 11

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի՝ Քասախ համայնքի **ավագանին որոշում է.**

Հաստատել Քասախ համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 21-ի N 2 արտահերթ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների ձևավորման և դրանց գործունեության կարգը հաստատելու մասին,
2. Քասախ համայնքում տեղական վճարների 2019 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին,
3. Քասախ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների, թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին
4. Քասախ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին
5. Քասախ համայնքի ավագանու 2011 թվականի փետրվարի 28-ի N14 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱՔՐԱՀԱՄՅԱՆ ԵՐԵՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ԹՈՎԱՄԱՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ


ՂԱԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱԿԵ


ՄԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝**



**ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ**



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 12-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐԻՐՂԱԿԳԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի՝ Քասախ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Քասախ համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող» համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Քասախ համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող ԽՄ-ի ավագանու անդամ առաջադրել Երեմ Աբրահամյանին:
3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 5-ի «Քասախ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 43-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՔԳԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՔՐԱՀԱՄՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱՔՐԱՀԱՄՅԱՆ ԵՐԵՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ԹՈՎԱՄԱՅԱՆ ԱՐՏԱԿ




ՀՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՊՐԱԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ


ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՃԵ

ՄԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝



ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

**ԿԱՐԳ  
ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ  
ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմնի (այսուհետ՝ ԽՄ) ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի նպատակն է՝ ձևավորել համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության հստակ, արդյունավետ մեխանիզմներ՝ ապահովելով փոխադարձ կապն ու համագործակցությունը, մի կողմից, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և, մյուս կողմից, համայնքում քաղաքականություն մշակող և որոշում ընդունող տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԽՄ-երի) միջև:
3. Սույն կարգի խնդիրներն են.
  - 1) հստակեցնել ԽՄ-ի գործունեության նպատակները, խնդիրները և գործառույթները.
  - 2) սահմանել ԽՄ-ի քանակն ու անվանումը.
  - 3) սահմանել ԽՄ-ի ձևավորման, անդամների ընտրության մոտեցումները և գործունեության կարգը.
  - 4) հստակեցնել ԽՄ-ի գործունեությանն առնչվող կողմերի դերերը և գործառույթները.
  - 5) սահմանել այլ մարմինների հետ ԽՄ-ի հարաբերությունները.
  - 6) սահմանել ԽՄ-ի գործունեության դադարեցման, սույն կարգում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման մոտեցումները:

**2. ԽՄ-Ն, ՆՐԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

1. ԽՄ-ն համայնքի ղեկավարին կից, հասարակական կարգով գործող մարմին է, որի միջոցով ապահովվում է համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը համայնքի կառավարմանն ու զարգացմանը: ԽՄ-ն, որպես համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների միավորված խումբ, կարող է խորհրդատվություն, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին՝ այդպիսով ակտիվ մասնակցություն ունենալով համայնքում քաղաքականությունների մշակման, որոշումների ընդունման և դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգի և գնահատման գործընթացներին:

2. ԽՄ-ի նպատակն է՝ նպաստել համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը և հասցեականությանը՝ ապահովելով համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

3. ԽՄ-ի խնդիրներն են.

- 1) խորհրդատվություն տրամադրել համայնքի ղեկավարին համայնքի զարգացման ուղղությունների վերաբերյալ.
  - 2) ապահովել տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունն ու նրանց ձայնի հասանելիությունը ՏԻՄ-երին.
  - 3) իրականացնել հանրային մշտադիտարկում (մոնիթորինգ) ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ:
4. ԽՄ-ի գործառույթներն են.
- 1) ապահովել համայնքի բնակիչների իրազեկությունը ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ.
  - 2) աջակցել և մասնակցել համայնքի զարգացման քառամյա ծրագրի, բյուջեի և այլ ծրագրային փաստաթղթերի մշակման, քննարկման, իրականացման և վերահսկման, մոնիթորինգի, աուդիտի և գնահատման աշխատանքներին.
  - 3) եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին համայնքին առնչվող կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի վերաբերյալ.
  - 4) վերհանել տվյալ ոլորտում հանրային կարևորություն և հնչեղություն ունեցող խնդիրները և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
  - 5) ուսումնասիրել և քննարկել համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերը և դրանց վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
  - 6) իրականացնել հանրային մշտադիտարկում (մոնիթորինգ) ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ.
  - 7) ապահովել հարթակ, մի կողմից, համայնքի ղեկավարի, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների համար և, մյուս կողմից, համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների միջև կապի և երկխոսության համար.
  - 8) աջակցել համայնքում կոնֆլիկտների կանխարգելմանը, ծագած կոնֆլիկտների լուծմանը, նպաստել համայնքում առկա հակամարտությունների մեղմմանը.
  - 9) հետևել ԽՄ-ի կողմից ընդունված որոշումների հետագա կատարման ընթացքին.
  - 10) համագործակցել համայնքային աշխատանքային խմբերի և այլ մարմինների հետ.
  - 11) առաջադրել «Համայնքի ակտիվ բնակիչ» խրախուսական մրցանակի թեկնածու:

### **3. ԽՄ-Ի ՔԱՆԱԿԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

1. Համայնքի ղեկավարին կից ձևավորվում և գործում է թվով մեկ ԽՄ, որն է.

- 1) Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման ԽՄ:

## **4. ԽՄ-Ի ԿԱԶՄԸ, ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ**

### **4.1 ԽՄ-ի կազմը և ձևավորումը**

1. ԽՄ-ն կարող են ունենալ մինչև 25 անդամ:
2. ԽՄ-ն ձևավորված է համարվում, եթե նշանակված է ԽՄ-ի առնվազն հինգ անդամ:
3. ԽՄ-ն ունի նախագահ և քարտուղար: Նախագահը և քարտուղարը ԽՄ-ի անդամ չեն:
4. ԽՄ-ի կազմում, իրենց համաձայնությամբ, կարող են ներգրավվել.
  - 1) համայնքի ավագանու մեկից երեք անդամ.
  - 2) համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետներ.
  - 3) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ.
  - 4) մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ.
  - 5) պետական կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների ներկայացուցիչներ.
  - 6) համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմինների (համատիրությունների, հավատարմագրային կամ լիազորագրային կառավարման մարմինների, կոոպերատիվների և այլնի) և (կամ) համայնքի թաղամասերի և բնակավայրերի ներկայացուցիչներ.
  - 7) փորձագետներ.
  - 8) ակտիվ բնակիչներ.
  - 9) այլ շահագրգիռ անձիք:
5. Յուրաքանչյուր կազմակերպությունից կամ խմբերից կարող է ներգրավվել մեկ անդամ:
6. ԽՄ-ն ձևավորվում է սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում:
7. ԽՄ-ն գործում է մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:
8. Նորընտիր համայնքի ղեկավարն իր լիազորությունները ստանձնելուց հետո մեկ ամսվա ընթացքում ձևավորում է նոր կազմով ԽՄ:

### **4.2 ԽՄ-ի անդամներին ներկայացվող պահանջները, նրանց թեկնածուների առաջադրումը և նշանակումը**

9. ԽՄ-ի անդամ կարող է լինել 16 տարին լրացած յուրաքանչյուր անձ:

10. ԽՄ-ի անդամ չեն կարող լինել.
- 1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք.
  - 2) հանցագործության համար դատապարտված անձինք, ովքեր իրենց պատիժը կրում են քրեակատարողական հիմնարկներում.
  - 3) զինված ուժերի ժամկետային զինծառայողները:
11. ԽՄ-ի անդամներին նշանակում է համայնքի ղեկավարը՝ համապատասխան որոշմամբ: ԽՄ-ի անդամները նշանակվում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը: Համայնքի նորընտիր ղեկավարը, նոր կազմով ԽՄ ձևավորելիս, կարող է վերանշանակել ԽՄ-ի անդամներին՝ վերջիններիս համաձայնությամբ:
12. ԽՄ-ի անդամների թեկնածուների առաջադրումը կատարվում է հետևյալ կարգով.
- 1) համայնքի ավագանու անդամի թեկնածուին առաջադրում է համայնքի ավագանին՝ իր որոշմամբ (թեկնածուի համաձայնությամբ).
  - 2) համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի թեկնածուին առաջադրում է համայնքի ղեկավարը (թեկնածուի համաձայնությամբ).
  - 3) ԽՄ-ի մյուս անդամների թեկնածուներին առաջադրում է ԽՄ-ի անդամների ընտրության նպատակով համայնքի ղեկավարի կողմից ձևավորված հանձնաժողովը՝ դիմում ներկայացրած անձանց կազմից:
13. ԽՄ-ի անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրությունը կատարվում է հրապարակային հայտարարության հիման վրա դիմումներ ներկայացրած անձանց կազմից: Հայտարարությունը տրվում է սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում: Հայտարարությունը փակցվում է ՏԻՄ-երի նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք հասանելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար: Համայնքի պաշտոնական ինտերնետային (համացանցային) կայքի առկայության դեպքում հայտարարությունը պարտադիր կերպով տեղադրվում է այդ կայքում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն): Հայտարարության մեջ նշվում է, թե ովքեր, ինչպես և ինչ ժամկետներում կարող են դիմել: Դիմումի ձևաչափային նմուշը սահմանված է հավելված 1-ում:
14. ԽՄ-ի անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրության նպատակով հանձնաժողովի կողմից անց է կացվում հարցազրույց: Հանձնաժողովը նախագահում է համայնքի ղեկավարը: Հանձնաժողովի կազմում կարող են ներգրավվել համայնքի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովը կարող է ունենալ երեք անդամ՝ ներառյալ նախագահը:



15. ԽՄ-ի անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրության ժամանակ կարող են հաշվի առնվել հետևյալ չափանիշները.
- 1) թեկնածուի կրթական ցենզը.
  - 2) համայնքի բնակչության տարբեր խմբեր ներկայացնող անձանց (կանայք, երիտասարդներ, խոցելի խմբեր, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն) ներկայացուցչության ապահովումը.
  - 3) հասարակական կարգով աշխատանքներ կատարելու նախկին փորձը.
  - 4) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ներկայացուցչության ապահովումը.
  - 5) հարցազրույցի արդյունքները:
16. Դիմում ներկայացրած այն անձինք, ովքեր չեն ընտրվել և նշանակվել որպես ԽՄ-ի անդամ, գրանցվում են դիմում ներկայացրած անձանց ռեզերվում:

### **4.3 ԽՄ-ի անդամների գործունեության դադարեցումը**

17. ԽՄ-ի անդամի գործունեությունը դադարեցվում է համայնքի ղեկավարի որոշմամբ, եթե ԽՄ-ի անդամը.
- 1) դիմում է ներկայացրել ԽՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ.
  - 2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահամանփակ գործունակ.
  - 3) առկա է նրա նկատմամբ դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ և նա իր պատիժը կրում է քրեակատարողական հիմնարկում.
  - 4) զորակոչվել է ժամկետային զինծառայության.
  - 5) երեք անգամ անընդմեջ, անհարգելի պատճառով չի մասնակցել ԽՄ-ի նիստերի աշխատանքին.
  - 6) մահացել է:
18. Եթե ԽՄ-ի անդամի գործունեության դադարեցման հետևանքով ԽՄ-ի անդամների թիվը նվազել է հինգից, ապա համայնքի ղեկավարը 15 օրվա ընթացքում նշանակում է նոր անդամ դիմում ներկայացրած անձանց ռեզերվից կամ, եթե դա հնարավոր չէ, ապա 15 օրվա ընթացքում նոր տրված հայտարարության հիման վրա դիմում ներկայացրած անձանց կազմից:
19. Եթե ԽՄ-ի անդամ հանդիսացող ավագանու ներկայացուցիչը կամ համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչը դադարեցնում է գործունեությունն իր պաշտոնում, նա կարող է շարունակել անդամակցել ԽՄ-ին:

### **4.4 ԽՄ-ի նախագահը և քարտուղարը**

20. ԽՄ-ի նախագահը համայնքի ղեկավարն է: Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ, ԽՄ-ի նախագահի գործառույթներն իրականացնում է համայնքի ղեկավարի տեղակալը:
21. ԽՄ-ի քարտուղարը համայնքի աշխատակազմի քարտուղարն է կամ նրա կողմից նշանակված համայնքի աշխատակազմի ներկայացուցիչը:

## 5. ԽՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

### 5.1 ԽՄ-ի գործունեությունը

1. ԽՄ-ի անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են անձամբ, հասարակական հիմունքներով:
2. ԽՄ-ի գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովումը կազմակերպում է համայնքի աշխատակազմի քարտուղարը՝ անհրաժեշտության դեպքում, աշխատակազմի բաժինների և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ներգրավմամբ և մասնակցությամբ:
3. Համայնքի ղեկավարը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում (նիստերի սենյակ, աշխատասենյակ, համակարգիչ, գրասենյակային պարագաներ և այլն) ԽՄ-ի՝ սույն կարգով նախատեսված գործունեության իրականացման և նիստերի կազմակերպման ու անցկացման համար, ինչպես նաև ԽՄ-ի գործունեությանը հաշմանդամների, սակավաշարժ խմբերի, կարողալու և լսելու դժվարություններ ունեցող անձանց մասնակցությունն ապահովելու համար:

### 5.2 ԽՄ-ի նիստերը

4. ԽՄ-ն գումարում է նիստեր՝ առնվազն վեց ամիսը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում, կարող են հրավիրվել արտահերթ նիստեր: Նիստերը հրավիրում և վարում է ԽՄ-ի նախագահը:
5. ԽՄ-ի նիստի ամսաթիվը որոշում է ԽՄ-ի նախագահը:
6. ԽՄ-ի առաջին նիստը գումարվում է ԽՄ-ի անդամներին նշանակելու մասին համայնքի ղեկավարի որոշումն ընդունելուց հետո 20 օրվա ընթացքում:
7. ԽՄ-ի նիստերը կազմակերպվում և անց են կացվում ՏԻՄ-երի նստավայրում կամ համայնքի ղեկավարի որոշմամբ մեկ այլ վայրում:
8. ԽՄ-ի նիստի վայրը, ամսաթիվը և քննարկման ենթակա հարցերի օրակարգը հրապարակվում են նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ: Նշյալ տեղեկատվությունը փակցվում է ՏԻՄ-երի նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք հասանելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար: Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայության դեպքում, նշյալ տեղեկատվությունը պարտադիր կերպով տեղադրվում է այդ կայքում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն):
9. ԽՄ-ի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ԽՄ-ի անդամների թվի կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում տվյալ նիստի իրավազորությունը, կամ նիստին չի ներկայանում ԽՄ-ի նախագահը և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին

կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են ԽՄ-ի՝ նիստին ներկայացած անդամները:

10. ԽՄ-ի նիստը շարունակվում է մինչև օրակարգի սպառումը:

11. ԽՄ-ի նիստն արձանագրվում է ԽՄ-ի քարտուղարի կողմից:

12. ԽՄ-ի նիստերը դռնբաց են: ԽՄ-ի նիստին կարող են հրավիրվել տվյալ նիստի օրակարգի նախագծում ընդգրկված հարցերին առնչվող անձիք, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

13. ԽՄ-ի անդամը ԽՄ-ի նախագահի կողմից կարող է հեռացվել ԽՄ-ի նիստից՝ նիստի աշխատանքները խոչընդոտելու դեպքում:

### 5.3 ԽՄ-ի նիստի օրակարգը

14. ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը: ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը ձևավորվում է ԽՄ-ի քարտուղարին նիստից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ ներկայացված գրավոր հարցերից: Հարցեր կարող են ներկայացնել նաև ԽՄ-ի բոլոր անդամները:

15. ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը, քննարկվող հարցերի վերաբերյալ կից փաստաթղթերը ԽՄ-ի քարտուղարը ներկայացնում է ԽՄ-ի անդամներին նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:

16. ԽՄ-ի նիստի օրակարգի նախագծում նշվում են.

1) նիստի անցկացման վայրը, ամսաթիվը և ժամը.

2) քննարկման ենթակա հարցերը.

3) քննարկվող յուրաքանչյուր հարցի զեկուցողի անունը և ազգանունը:

17. ԽՄ-ի նիստն սկսվում է ԽՄ-ի նիստի օրակարգի հաստատումով՝ ԽՄ-ի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

### 5.4 ԽՄ-ի որոշումները

18. ԽՄ-ի որոշումներն ընդունվում են ԽՄ-ի եզրակացությունների և (կամ) առաջարկությունների ձևով, որոնք ներկայացվում են համայնքի ղեկավարին: ԽՄ-ի որոշումները համայնքի ղեկավարի համար կրում են խորհրդատվական բնույթ: ԽՄ-ի որոշումների հիման վրա համայնքի ղեկավարը կարող է ընդունել համապատասխան որոշումներ:

19. ԽՄ-ի որոշումն ընդունվում է տվյալ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Հավասար ձայների առկայության դեպքում վճռորոշ է տվյալ ԽՄ-ի՝ տարեց անդամի ձայնը:

20. ԽՄ-ի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: ԽՄ-ի նախագահը (համայնքի ղեկավարը) ունի խորհրդակցական ձայնի իրավունք:

21. ԽՄ-ի որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ԽՄ-ի անդամների անունները և ազգանունները: ԽՄ-ի որոշումը ստորագրում են ԽՄ-ի նիստին ներկա անդամները:

## 5.5 ԽՄ-ի նիստերի արձանագրությունները

22. ԽՄ-ի նիստերն արձանագրվում են ԽՄ-ի քարտուղարի կողմից: Նիստի արձանագրությունը ներառում է.

- 1) նիստի անցկացման վայրը և ամսաթիվը.
- 2) նիստին մասնակցած ԽՄ-ի անդամների, հրավիրված անձանց անունները և ազգանունները.
- 3) նիստի օրակարգը.
- 4) քննարկված հարցերի, զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները.
- 5) ընդունված որոշումները, դրանց ներկայացման և հրապարակման ձևերը.
- 6) ընդունված որոշումներին դեմ քվեարկածների հատուկ կարծիքները (եթե այդպիսիք կան):

Նիստի արձանագրությանը կցվում են ԽՄ-ի քննարկմանը դրված նյութերը, ուսումնասիրությունները, լուսանկարները, տեսանյութերը և այլն:

23. ԽՄ-ի նիստերի արձանագրությունները ստորագրում է ԽՄ-ի քարտուղարը: ԽՄ-ի նիստերի արձանագրությունները ենթակա են հրապարակման:

## 6. ԽՄ-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

1. ԽՄ-ն մշտական կապ է հաստատում և համագործակցում է համայնքի տարածքում գործող այլ մարմինների՝ համայնքի ավագանու հանձնաժողովների, համայնքի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչների և շահագրգիռ այլ անձանց հետ:

2. ԽՄ-ն ուղղակի կապ է հաստատում համայնքային աշխատանքային խմբերի (ՀԱԽ-երի) հետ, որոնք կարող են ձևավորվել ըստ համայնքի ղեկավարի՝ օրենքով սահմանված գործունեության բնագավառների (ոլորտների) կամ դրանց խմբերի, ըստ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի կամ ըստ համայնքի առանձին թաղամասերի: ԽՄ-ի անդամները կարող են նախաձեռնել նման ՀԱԽ-երի ձևավորումը: ՀԱԽ-երի ձևավորումը համայնքի բնակիչների կողմից նախաձեռնվելու դեպքում նրանք կարող են այդ մասին տեղեկացնել ԽՄ-ին: ՀԱԽ-ի անդամների կազմը համաձայնեցվում է համայնքի ղեկավարի և ԽՄ-ի հետ: ՀԱԽ-երն իրենց կողմից կատարված աշխատանքների արդյունքները համայնքի ղեկավարին ներկայացնելուց բացի, ներկայացնում են նաև ԽՄ-ին: ԽՄ-ն մեթոդական օգնություն, խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն է տրամադրում ՀԱԽ-երին՝ նրանց աշխատանքները նպատակային և արդյունավետ իրականացնելու համար:

## 7. ԽՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

1. Համայնքում գործող ԽՄ-ի գործունեությունը դադարեցվում է.

- 1) երբ լրացել է համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը.

- 2) երբ սույն կարգում փոփոխությունների և (կամ) լրացումների արդյունքում փոխվել են ԽՄ-ի քանակը և (կամ) անվանումը:

## **8. ԽՄ-ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԴԵՐԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ**

### **8.1 Համայնքի ավագանի**

1. Համայնքի ավագանին.
  - 1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, հաստատում է սույն կարգը.
  - 2) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, փոփոխություններ և (կամ) լրացումներ է կատարում սույն կարգի մեջ կամ դադարեցնում է սույն կարգի գործողությունը.
  - 3) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ծանոթանում է ԽՄ-ի ուսումնասիրությունների, եզրակացությունների և առաջարկությունների հետ.
  - 4) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ԽՄ-ի եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա ընդունում է համապատասխան որոշումներ,
  - 5) կարող է համայնքի ղեկավարից պահանջել տեղեկանքներ համայնքի տարածքում գործող ԽՄ-ի գործունեության վերաբերյալ:

### **8.2 Համայնքի ղեկավար (ԽՄ-ի նախագահ)**

2. Համայնքի ղեկավարը.
  - 1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմնի քանակը, անվանումը, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու վերաբերյալ.
  - 2) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը.
  - 3) ձևավորում է ԽՄ-ի անդամների ընտրության հանձնաժողով.
  - 4) նշանակում է ԽՄ-ի անդամներին.
  - 5) դադարեցնում է ԽՄ-ի անդամների լիազորությունները.
  - 6) կազմակերպում, ղեկավարում և նախագահում է ԽՄ-ի գործունեությունը.
  - 7) անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ԽՄ-ի՝ սույն կարգով նախատեսված գործունեության իրականացման, նիստերի կազմակերպման ու անցկացման համար.
  - 8) հրավիրում և վարում է ԽՄ-ի նիստերը.
  - 9) որոշում է ԽՄ-ի նիստերին հրավիրվող անձանց կազմը.
  - 10) ձևավորում է ԽՄ-ի նիստերի օրակարգերի նախագծերը.
  - 11) ծանոթանում է ԽՄ-ի ուսումնասիրություններին, եզրակացություններին և առաջարկություններին.
  - 12) ԽՄ-ի եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա նախաձեռնում է անհրաժեշտ գործողություններ, ընդունում է որոշումներ կամ առաջարկություններ է ներկայացնում համայնքի ավագանուն համապատասխան որոշումներ ընդունելու համար.
  - 13) նախաձեռնում է ՀԱԽ-երի ձևավորումը.

14) համաձայնություն է տալիս համայնքի տարածքում ձևավորվող ՀԱԽ-երի կազմի վերաբերյալ:

### **8.3 Համայնքի ղեկավարի տեղակալ**

3. Համայնքի ղեկավարի տեղակալը.

1) փոխարինում է համայնքի ղեկավարին՝ որպես ԽՄ-ի նախագահ, նրա բացակայության ժամանակ:

### **8.4 Համայնքի աշխատակազմի քարտուղար**

4. Համայնքի աշխատակազմի քարտուղարը.

1) կազմակերպում է ԽՄ-ի գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովումը, աջակցում է ԽՄ-ի գործունեությանը, նիստերի կազմակերպմանը և անցկացմանը.

2) իրականացնում է ԽՄ-ի քարտուղարի գործառույթները անձամբ կամ նշանակում է ԽՄ-ի քարտուղարին:

### **8.5 ԽՄ-ի քարտուղար**

5. ԽՄ-ի քարտուղարը.

1) հարցեր է ընդունում ԽՄ-ի անդամներից ԽՄ-ի նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկելու համար.

2) ապահովում է ԽՄ-ի կազմակերպչա-տեխնիկական աշխատանքների իրականացումը.

3) ապահովում է ԽՄ-ի անդամների և նիստերին հրավիրված անձանց իրազեկումը նիստերի անցկացման օրվա, ժամի, վայրի և քննարկվող հարցերի մասին.

4) վարում է ԽՄ-ի գործավարությունը.

5) կազմում և ստորագրում է ԽՄ-ի նիստերի արձանագրությունները.

6) ապահովում է ԽՄ-ի գործունեության, ընդունված որոշումների հրապարակայնությունը:

## **8. 6. ԽՄ-ի անդամներ**

6. ԽՄ-ի անդամները.

1) մասնակցում են ԽՄ-ի նիստերին.

2) հարցեր են ներկայացնում ԽՄ-ի նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկելու համար.

3) ներկայացնում են բանավոր կամ գրավոր կարծիք ԽՄ-ի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ.

4) մասնակցում են ԽՄ-ի որոշումների ընդունման քվեարկությանը.

5) ստորագրում են ԽՄ-ի որոշումները.

6) ծանոթանում են ԽՄ-ի նիստերի արձանագրություններին.


- 7) կատարում են ԽՄ-ի որոշումներից բխող կամ ԽՄ-ի նախագահի կողմից տրված հանձնարարականներ.
- 8) նախաձեռնում են ՀԱԽ-երի ձևավորումը:

**9. ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**


1. Սույն կարգը վերանայվում է համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքի ղեկավարը կարող է առաջարկություններ ներկայացնել համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը:
2. Սույն կարգի մեջ փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը, գործողության դադարեցումը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, իրավասու է կատարել միայն համայնքի ավագանին՝ իր համապատասխան որոշմամբ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝**

**ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ**



գ. Քասախ  
21 հունվարի 2019թ.



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 13-Ն

### ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով, «Տեղական տնտեսական կառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հավելվածի 49-րդ կետի՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Քասախ համայնքում սահմանվում են 2019թվականի տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) Քասախ համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար տաս հազար դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի)



նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար տասնհինգ հազար դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝վեց հազար դրամ

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝տասնհինգ հազար դրամ

7) Համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթների, աղբահանության վճարը գանձվում է ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական մեկ հարյուր դրամ:

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դրմաց սահմանել աղբահանության վճար 1 խորանարդ մետր աղբի համար մեկ հազար դրամ, բայց ոչ պակաս ամսական մեկ հազար դրամից, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար սահմանել վճար ամսական երեսուն հազար դրամ:

9) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափ սահմանել համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական հիսուն դրամ բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի:

10) համայնքային ենթակայության արտադարոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց սահմանել ամսական փոխհատուցման գումար՝

ա. դաշնամուր, ջութակ, թավջութակ, կիթառ-չորս հազար դրամ

բ. ազգային նվագարան, դիոլ- երեք հազար հինգ հարյուր դրամ

գ. էստրադային վոկալ-չորսհազարդրամ

դ. ժողովրդական պար- չորս հազար դրամ

ե. ժամանակակից պար, մարմնակրթություն- չորս հազար դրամ

գ. ժողովրդական պար՝ տղաների խումբ- չորս հազար դրամ

ե. գեղարվեստ- երեք հազար դրամ

ը. նկարչություն /բատիկա/- երեք հազար դրամ

թ. ձեռարվեստ- չորս հազար դրամ

ժ. թատերական- չորս հազար դրամ

ի. առարկայական դասընթացներ /մաթեմատիկա, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն - չորս հազար դրամ

լ. կիթառ- չորս հազար դրամ

խ. շախմատ- երեք հազար դրամ,

ծ. գեղագիտական բաժնի տեսական առարկաների ուսումնասիրում- մեկ հազար դրամ,

կ. խմբակների անհատական պարապմունքներ- հինգ հազարից քսան հազար դրամ,

հ. ֆիզիկական անձանց և այլ կազմակերպությունների կողմից սպորտային դահլիճի վարձակալական վճար ամիսը - տասնհինգ հազար դրամ,

ձ. կազմակերպությունների կողմից միջոցառումների դահլիճի մեկ օրվա վարձավճար - մեկհարյուրհիսունհազար դրամ

11) Քասախ համայնքի վարչական տարածքում տեղակայված բնակարանի վերահասցեավորման համար համայնքի կաղմից մատուցված ծառայությունների դիմաց որպես փոխհատուցման գումար սահմանել մեկ հասցեի համար մեկ հազար դրամ, իսկ մյուս անշարժ գույքերի հասցեավորման համար համայնքի կաղմից մատուցված ծառայությունների դիմաց որպես փոխհատուցման գումար սահմանել մեկ հասցեի համար՝ հինգ հազար դրամ :

12) Քասախ համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար սահմանել երկու հարյուր դրամ փոխհատուցման վճար:

13) Քասախ համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ համաձայն հավելված 1-ի:

**ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ ԵՎ ԳՆԱՑՈՒՑԱԿ**

	Անասնաբուժական ծառայությանն վանումը	Գինը /դրամ/
1	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն	600
	Ծննդօգնություն	
2	1. թեթև միջամտություն	1500
	2. ծանր միջամտություն	10000
3	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)	Մանրկենդանի 150 Խոշորկենդանի 300
4	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար	1500
5	Ախտահանություն	1 քառ. մետր 300
6	Միջատազերծում (դեզինսեկցիա)	1 քառ. մետր 200
7	Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)	1 քառ. մետր 200
8	Արհեստական սերմնավորում	6000
10	Կենդանու լիերծում	մանր կենդանի 1000 խոշոր կենդանի 3000
11	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից	Յուրաքանչյուր այցելությունը 1500
12	Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից	մանր կենդանի 1000 խոշոր կենդանի 2000
13	Կենդանիների հետ սպանդային զննում (մինչև 2018թ. հուլիսամիսը)	մանր կենդանի 1000 խոշոր կենդանի 2000

15) Քասախ համայնքի սեփականություն հանդիսացող հենասյուններից օգտվելու համար սահմանել վարձավճար՝

ա. 1-50 հենասյունից օգտվելու համար՝ մեկ հենասյան համար սահմանել ամսական մեկ հարյուր դրամ:

բ. 51 և ավելի հենասյուններից օտվելու համար՝ մեկ հենասյան համար սահմանել ամսական երկու հարյուր դրամ:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԵՐԵՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՂՈՒԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱԿԵ


ՄԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ



ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 14

### ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերի, ինչպես նաև 34-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է*

1. Սահմանել Քասախ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1,2
2. Սահմանել հավելավճար 3 %-ի չափով համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների՝ տվյալ աշխատակազմում ունեցած առնվազն հինգ տարին լրացած յուրաքանչյուր աշխատանքային տարվա ստաժի համար 1)
3. Սահմանել համայնքային ծառայության պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասայի աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու դեպքում 5%-ի չափով հավելավճար՝ պաշտոնային դրույքաչափի նկատմամբ:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվելու համար 5 %-ի չափով հավելավճար համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ:
5. Սույն որոշման 1-ին կետում նշված հավելված 1 ով սահմանված համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը նախորդ տարվա պաշտոնային դրույքաչափերից ցածր լինելու դեպքում՝ պահպանվում են նախորդ տարվա պաշտոնային դրույքաչափերը: Սույն կետում նշված համայնքային ծառայողների աշխատանքից ազատման դեպքում այդ պաշտոնում առաջին անգամ, այդ թվում՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով, նշանակվող

- համայնքային ծառայողների նկատմամբ կիրառվում է հավելված 1-ով սահմանված պաշտոնային դրույքաչափը,
- եթե նա ունի համայնքային ծառայության համապատասխան աշխատանքային ստաժ:
6. Աշխատակազմին և բյուջետային հիմնարկների աշխատողներին համաձայն 2010թվականի դեկտեմբերի 2-ի N 1698-Ն որոշմամբ հաստատված ծանր, վնասակար աշխատանքների կատարման դեպքում սահմանել հավելում պաշտոնային դրույքաչափի 12%-ի չափով, իսկ գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար սահմանել հավելում ժամային դրույքաչափի 30%-ի չափով:
7. Համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հերթական տոկոսային ավելացումն իրականացվում է այդ իրավունքի ծագմանը հաջորդող տարվա հունվարի 1-ից: Սույն որոշմամբ նախատեսված պաշտոնային դրույքաչափի հերթական տոկոսային ավելացումն ստանում են այն համայնքային ծառայողները, ովքեր համայնքային ծառայության բնագավառում տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ ունեն առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:
8. Համայնքային ծառայողը հատուկ առաջադրանքների որակյալ կատարման համար կարող է պարգևատրվել իր մեկ ամսվա հիմնական աշխատավարձի չափով՝ անմիջական ղեկավարի համապատասխան իրավական ակտով:
9. Համայնքային ծառայողին, իսկ նրա մահվան դեպքում նրա ընտանիքի անդամներին կարող է տրվել միանվագ դրամական օգնություն՝ համայնքային ծառայողի մինչև մեկ ամսվա հիմնական աշխատավարձի չափով: Դրամական օգնությունը կարող է տրվել համայնքային ծառայողի ամուսնության, տարերային աղետի հետևանքով վնաս կրելու, նրա կամ նրա ընտանիքի անդամի երկարատև հիվանդության, նրա կամ նրա ընտանիքի անդամի մահվան դեպքերում: Դրամական օգնությունը կարող է տրվել համայնքային ծառայողի (նրա մահվան դեպքում՝ ընտանիքի անդամի), դիմումի կամ նրա անմիջական ղեկավարի զեկուցագրի հիման վրա:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6

Դեմ -4

Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ԵՐԵՄ

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՂՐԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԱՐՏԱԿ


ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԵ

ՄԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ


1. Աշխատակիցների թվաքանակը՝ 15:

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Պաշտոնի ծածկագիր	հաստիքային միավոր	Պաշտոնային և դրույքաչափ, ՀՀդրամ	Հավելում	Հավելավճար	Աշխատավարձի չափը, ՀՀդրամ
1	2	3	4	5	6	7	8
